ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/15

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյան

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ ներկայացուցիչներ՝ Գ. Պողոսյան, Ա. Համբարյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 22.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Կասեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով ընթացակարգը,

2. Չեղարկել 08.04.2019թ-ին կայացած նիստի ընթացքում հանձնաժողովի ընդունած որոշումը, այն է «մերժել «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին և որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել 2-րդ տեղը զբաղեցրած ընկերությանը՝ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին» /հանձնաժողովի նիստի արձանագրություն թիվ 5-ը կցվում է/ և հաղթող ճանաչել «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին:

Բողոքներ քննող անձի 22.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 25.04.2019թ., 02.05.2019թ. և 16.05.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 16.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.05.2019թ.:

2. <u>«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի մարտի 18-ին հրապարակվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար (այսուհետև՝ Պատվիրատու)՝ ուսումնական պաստառների ձեռքբերման նպատակով կազմակերպված <ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

<Իմպորտ Թրեյդ> ՍՊ ընկերությունը 24.03.2019թ. <ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19> ծածկագրով ընթացակարգի մասնակցության համար հայտ է ներկայացրել և գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. որոշմամբ ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից: Նույն օրը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով մեր ընկերությանը առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

29.03.2019թ. հրավերի 7.14 կետով սահմանված կարգով ընթացակարգի քարտուղարի Nana.Hakobvan@anpp.am, էլ. փոստին մեր կողմից ուղարկվել են հրավերով պահանջվող «մասնագիտական փորձառության», «տեխնիկական միջոցների», «աշխատանքային ռեսուրսների» և «ֆինանսական միջոցների» առկայությունը հիմնավորող փաստաթղթերը:

Որոշման 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող

ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. Երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Իսկ վերը նշված կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները»:

Ընդ որում Հրավերի 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

Հրավերի 7.15 կետի համաձայն՝

Կոմիտեն սույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա-դրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն:

04.04.2019թ. (ժամը՝ 17:57) ընթացակարգի քարտուղարի կողմից մեր ընկերության importart.info@amail.com, էլ փոստին նամակ է ուղարկվել, առ այն, որ <ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացությամբ Ձեր ընկերության- երեք հաշվետու տարիների

համախառն եկամտի հանրագումարը զրո է>: Ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 47-րդ կետի պահանջներով մեզ առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տվյալ անհամապատասխանությունը:

Անհրաժեշտ է նշել, որ հիշյալ ծանուցումը կատարվել է հրավերի 7.20 կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգի խախտմամբ: Այն է հրավերի 7.20 կետի 2-րդ ենթակետով սահմանված է «Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ», սակայն արձանագրություն կցված չի եղել:

Չնայած այն հանգամանքին, որ սահմանված կագով, պատշաճ չենք ծանուցվել առկա անհամապատասխանության մասին, այնուամենայնիվ 05.04.2019թ. խնդրել եմ ՀՀ ՊԵԿ մեզ սպասարկող ստորաբաժանմանը շտկել Կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մեջ տեղ գտած սխալը և տրամադրել գրավոր տեղեկատվություն՝ մեր ընկերության երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի վերաբերյալ, քանի որ Հրավերի 7.21 կետի 2-րդ ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Հրավերի 7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը»:

Հրավերի 7.21 կետի 2-րդ ենթակետի համաձայն

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել, ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացելով, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ (հարկ ենք համարում նշել, որ հիշատակված կետում գրավոր տեղեկատվության որևէ կոնկրետ ձև նշված չէ, ուստի մենք հանձնաժողովի պահանջած տեղեկատվությունը ներկայացրել ենք մեզ հասու գրավոր տեղեկատվության միջոցով):

Այսպիսով, ՀՀ ՊԵԿ կողմից, որպես գրավոր տեղեկատվություն մեզ տրամադրվել են ընկերության 2018թ մայիսից դեկտեմբեր ամիսների ԱԱՀ ամսեկան (ընկերությունը գրանցված է 23.03.2018թ) և 2018թ. տարեկան հաշվարկները հաստատված իրենց կնիքով, քանի որ ընթացակարգի հրավերով սահմանված 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն տարածքային բաժինները ընդհանրապես չեն տրամադրում: Հիշյալ ձևով տրամադրվում է միայն Lena Naiarvan@taxservice.am էլ. հասցեից 13 աշխատանքային օրվա ընթացքում/, այն էլ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից հարցում ստանալու դեպքում: Ընկերությունը ներկայացնում է գրավոր տեղեկատվությունը այն ձևով, որ ձևով որ իրեն 1 օրվա ընթացքում տրամադրում է ՊԵԿ տարածքային սպասարկող բաժինը:

Տրամադրված գրավոր հաշվարկներից հստակ երևում է, որ ընկերության հրավերով պահանջվող, հաշվետու ժամանակաշրջանում ունեցած համախառն եկամտի հանրագումարը զրո չէ, այլ կազմում է՝ 22 755 663 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է հրավերով պահանջված չափը՝ 3 997 500 « դրամը:

Նույն օրը՝ ՀՀ ՊԵԿ ստորաբաժանման կողմից կնքված հաշվարկները սահմանված կարգով ուղարկվել են հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին:

09.04.2019թ մեր ընկերության էլ հասցեին ստացվել է ոչ ավտոմատ ծանուցում, որին կցված էր ընթացակարգի հանձնաժողովի թիվ 5 արձանագրությունը: Արձանագրության մեջ գրված էր: որ <Իմպորտ Թրեյդ> ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել, ինչի արդյունքում ընկերության հայտը մերժվել է, իսկ ներկայացված ՊԵԿ հաշվարկները հանձնաժողովը ուսումնասիրելու և գնահատելու իրավասություն չունի /արձանագրություն 5/:

Այսպիսով, հանձնաժողովի կողմից ներկայացված անհամապասխանությունը ամբողջովին շտկվել է մեր ընկերության կողմից /սահմանված կարգով և ժամկետում/, ինչի արդյունքում հանձնաժողովը մեր կողմից ներկայացված հաշվարկներով լիովին հնարավորություն է ունեցել բավարար գնահատելու հրավերով պահանջվող «ֆինանսական միջոցներ» որակավորման չափորոշիչը, սակայն մեզ համար անհայտ պատճառով չի արել այն, փոխարենը՝ մերժել է ընկերության հայտը: Հանձնաժողովը պետք է գնահատի կազմակերպության երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, այլ ոչ թե տեղեկատվության թղթի ձևը, գույնը կամ այլ ձևական կողմը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, ընկերությունը ներկայացրել է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր

համապատասխանության մասին, քանի որ մեր ընկերությունը իրականում համապատասխանում է հրավերով պահանջվող որակավորման պահանջներին և ՊԵԿ-ի կողմից տրված ոչ ճիշտ տեղեկատվությունը չի կարող բացասական հետևանքներ ունենալ մասնակցի համար:

Պնդում եմ, որ հանձնաժողովի որոշումը հակասում է օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին և նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված համաչափության սկզբունքին, ասել է թե պետական գնումների ընթացակարգը պետք է ուղղված լիներ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հետապնդվող նպատակին և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Հանձնաժողովը, իրավական նորմերին տալով կամայական մեկնաբանություն, ստեղծել է անհավասար և խտրական մրցակցային պայմաններ, որի արդյունքում մեր ընկերությունը անհիմն կերպով զրկվել է ընթացակարգին հետագա մասնակցությունից, ավելորդ չէ նշել նաև այն, որ ընթացակարգում մեզ չվերականգնելու դեպքում պետությանը կպատճառվի՝ 1 752 500 ՀՀ դրամի վնաս:»:

Հաշվի առնելով վերը շարադրվածը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 50-ի, 7-րդ մասի, 1-ին կետի, բ/ ենթակետով

Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Կասեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով ընթացակարգը,
2. Չեղարկել 08.04.2019թ-ին կայացած նիստի ընթացքում հանձնաժողովի ընդունած որոշումը, այն է «մերժել «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին և որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել 2-րդ տեղը զբաղեցրած ընկերությանը՝ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին» և հաղթող ճանաչել «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.04.2019թ. գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 22.04.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել, նշանակված նիստերին չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

18.03.2019թ.-ին հրապարակվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար (այսուհետև՝ Պատվիրատու)՝ ուսումնական պաստառների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

«Իմպորտ Թրեյդ» ՍՊ ընկերությունը 24.03.2019թ. «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով ընթացակարգի մասնակցության համար հայտ է ներկայացրել և գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. 3-րդ արձանագրությամբ ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից:

Գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանն առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

29.03.2019թ. հրավերի 7.14 կետով սահմանված կարգով ընթացակարգի քարտուղարի Nana.Hakobvan@anpp.am, էլ. փոստին Ընկերության կողմից ուղարկվել են հրավերով պահանջվող «մասնագիտական փորձառության», «տեխինակական միջոցների», «աշխատանքային ռեսուրսների» և «ֆինանսական միջոցների» առկայությունը հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 08.04.2019թ. 5-րդ արձանագրության համաձայն՝ ըստ ՀՀ ՊԵԿ տրամադրած եզրակացության, Ընկերության երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը զրո է:

Ընկերությանը, գնահատող հանձնաժողովի կողմից առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տվյալ անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի 08.04.2019թ. 5-րդ արձանագրության համաձայն՝ «Իմպորտ Թրեյդ» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել, ինչի արդյունքում ընկերության հայտը մերժվել է, իսկ ներկայացված ՀՀ ՊԵԿ հաշվարկները հանձնաժողովի կողմից չեն ուսումնասիրվել ու գնահատանքի արժանացվել՝ հանձնաժողովի այդպիսի իրավասության բացակայության պատճառաբանությամբ:

«Իմպորտ Թրեյդ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների նախագահի 2016թ.-ի դեկտեմբերի 30-ի «ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը»

հաստատելու մասին N 298-Ն հրամանով հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված)՝ ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկների համաձայն՝ Ընկերությունը 2018թ.-ի ընթացքում ՀՀ ՊԵԿ մարմին է ներկայացրել ներքոնշյալ հաշվետվությունները՝

հուլիս ամսվա համար՝ 1 772 088 ՀՀ դրամի,

սեպտեմբեր ամսվա համար՝ 3 966 875 ՀՀ դրամի,

հոկտեմբերի ամսվա համար՝ 11 657 500 ՀՀ դրամի,

նոյեմբեր ամսվա համար՝ 5 359 200 ՀՀ դրամի,

ընդհանուր առմամբ 22 755 663 ՀՀ դրամ գումարի համախառն եկամտի հանրագումարի վերաբերյալ հաշվետվություն:

Ընկերության կողմից ներկայացված թիվ 5 Հավելվածի՝ գնային առաջարկի համաձայն, որպես պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գին առաջարկվել է 3 997 500 ՀՀ դրամ գումար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 22.04.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն

արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն

կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Իմպորտ Թրեյդ» ՍՊ ընկերությունը 24.03.2019թ. «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով ընթացակարգի մասնակցության համար հայտ է ներկայացրել և գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. 3-րդ արձանագրությամբ ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից:

ՀՀ ՊԵԿ գնահատող հանձնաժողովի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Ընկերության երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը զրո է:

Գնահատող հանձնաժողովի 08.04.2019թ. 5-րդ արձանագրության համաձայն՝ «Իմպորտ Թրեյդ» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել, ինչի արդյունքում ընկերության հայտը մերժվել է, իսկ ներկայացված ՀՀ ՊԵԿ հաշվարկները հանձնաժողովի կողմից չեն ուսումնասիրվել ու գնահատանքի արժանացվել՝ հանձնաժողովի այդպիսի իրավասության բացակայության պատճառաբանությամբ:

«Իմպորտ Թրեյդ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած, ՀՀ ՊԵԿ կողմից կնքված ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկների համաձայն՝ Ընկերությունը 2018թ.-ի ընթացքում ՀՀ ՊԵԿ մարմին է ներկայացրել ներքոնշյալ հաշվետվությունները՝

հուլիս ամսվա համար՝ 1 772 088 ՀՀ դրամի,

սեպտեմբեր ամսվա համար՝ 3 966 875 ՀՀ դրամի,

հոկտեմբերի ամսվա համար՝ 11 657 500 ՀՀ դրամի,

նոյեմբեր ամսվա համար՝ 5 359 200 ՀՀ դրամի,

ընդհանուր առմամբ 22 755 663 ՀՀ դրամ գումարի համախառն եկամտի հանրագումարի վերաբերյալ հաշվետվություն, ինչը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարը:

Վերոնշյալ իրավական նորմերի՝ գործում առկա փաստերի հետ համադրման արդյունքում, հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ կողմից հաստատված «Իմպորտ Թրեյդ» ՍՊ ընկերության ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկների

հաշվետվությունները, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերությունն բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

Ինչ վերաբերում է «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու՝ Ընկերության բողոքով ներկայացրած պահանջին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է այն անհիմն է, մերժման ենթակա, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

Վերոնշյալ հոդվածի դրույթների վերլուծությունից հստակ է, որ Բողոքներ քննող անձն օժտված չէ որևէ մասնակցի գնումների գործընթացի շրջանակներում հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն բավարարել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 22.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

1. Դադարեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2019թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ՝ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջի մասով կայացված որոշումը:

2. «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու պահանջի մասին մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ